Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Ն 5 հիմնական դպրոց» Պետական ոչ առևտրային կազմակերպության «Բնություն» առարկայի /3 դասաժամ/, «Աշխարհագրություն» առարկայի / 6 դասաժամ/, «Մաթեմատիկա» առարկայի /5 դասաժամ/, «Հանրահաշիվ» առարկայի /3 դասաժամ/, «Երկրաչափություն» առարկայի /2 դասաժամ/, «Հայոց լեզու և գրականություն» /7 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
-մեկ լուսանկար 3X4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 09–ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9:00-15:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. հոկտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին, «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան Ն 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ ք. Արմավիր, Հանրապետություն 29: Տեղեկությունների համար զանգահարել 077005424 հեռախոսահամարով:

Հարգանքով՝ դպրոցի տնօրեն Գ. Գասպարյան